

**Հարցաշար**  
**«Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի**  
**Հանրապետական փուլ-2024**  
**11-12-րդ դասարաններ - 120 րոպե**

**№ 1-4**  
**Ընտրովի պատասխանով առաջադրանքներ**  
**(0,5 X 4 = 2 միավոր)**

**1. Քրիստոնեական եկեղեցու ո՞ր հիմնական ուղղությանն է պատկանում եթովպական Ուղղափառ եկեղեցին. (0.5 միավոր)**

- 1) Կաթոլիկ
- 2) Արևելյան ուղղափառ
- 3) Օրթոդոքս
- 4) Բողոքական

**2. Ո՞ր գավառում է գտնվել Հռոմոսի վանքը. (0.5 միավոր)**

- 1) Արշարունյաց
- 2) Ռշտունյաց
- 3) Կարնո
- 4) Շիրակի

**3. Ո՞ր կաթողիկոսի հանձնարարությամբ է հիմնադրվել Ամերիկայի առաջնորդական թեմը. (0.5 միավոր)**

- 1) Մկրտիչ Ա. Խրիմյան
- 2) Գևորգ Ե. Սուրենյանց
- 3) Գևորգ Զ. Չորեքչյան
- 4) Վազգեն Ա. Պալճյան

**4. Պատարագի ո՞ր հատվածն է տեղի ունենում եկեղեցու ավանդադրան մեջ և ավարտվում եկեղեցու մեջ թափորով. (0,5 միավոր)**

- 1) Պատրաստություն
- 2) Երախայից պատարագ
- 3) Հավատացելոց պատարագ
- 4) Արձակում

№ 5-8

Կառուցված պատասխանով առաջադրանքներ  
(1 x 4 = 4 միավոր)

5. \_\_\_\_\_ թ. բյուզանդական Ձենոն կայսեր կողմից ընդունված հրովարտակը դատապարտում էր Քաղկեդոնի ընդունած երկաթնակ վարդապետությունը և պաշտպանում միավորյալ մի բնություն բանաձևը: (1 միավոր)
6. \_\_\_\_\_ կաթողիկոսից սկսած Հայոց հայրապետները սկսեցին կոչվել թվահամարով: (1 միավոր)
7. VII դարով թվագրվող «Վեհամոր Ավետարանը» ամբողջական հնագույն Ավետարանն է հայերեն ձեռագրերի շարքում. այն իր զորության և հնության պարճառով կնքվել է «Ծեր» և «\_\_\_\_\_» անուններով: (1 միավոր)
8. \_\_\_\_\_ գրել է. «Քրիստոնեությունը ԱՂ եղավ մեր ժողովրդի հոգեկան կյանքի համար: Եվ Հայաստանյազ եկեղեցին հանդիսացավ ԱՂԱՄԱՆԸ»: (1 միավոր)

№ 9-10

Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ  
(1 x 2 = 2 միավոր)

9. Արքայի անունը համապատասխանեցնել իրեն ժամանակակից Հայոց կաթողիկոսի անվանը. (1 միավոր)

1. Աշոտ I Բագրատունի
2. Խոսրով III Կոտակ
3. Գագիկ I Բագրատունի
4. Հեթում I
5. Աբաս Բագրատունի
6. Արշակ II Արշակունի
7. Վռամշապուհ

- ա. Սարգիս Ա. Սևանցի  
բ. Ս. Ներսես Ա. Պարթև  
գ. Գրիգոր Զ. Ապիրատ  
դ. Ս. Սահակ Ա. Պարթև  
ե. Գևորգ Բ. Գառնեցի  
զ. Կոստանդին Ա. Բարձրբերդցի  
է. Անանիա Ա. Մոկացի  
ը. Ս.Վրթանես Ա. Պարթև

1	
2	
3	
4	
5	
6	
7	

**10. Հիսուս Քրիստոսի կյանքի հետ կապված իրադարձությունը համապատասխանեցնել վայրի անվանմանը.**

**(1 միավոր)**

1. Հուդան Հիսուս Քրիստոսին համբուրեց
2. Հիսուս Քրիստոսին խաչեցին
3. Զատիկի տոնի նախօրյակին Հիսուս Քրիստոս մի քանի օր բնակվեց
4. Հիսուս Քրիստոս համբարձվեց
5. Հիսուս Քրիստոս ծնվեց
6. Եգիպտոսից վերադառնալուց Հիսուս Քրիստոս բնակվեց
7. Հիսուս Քրիստոսի պայծառակերպությունը տեղի ունեցավ

- ա) Բեթանիա գյուղ
- բ) Թաբոր լեռ
- գ) Գողգոթա բլուր
- դ) Գեթսեմանիի պարտեզ
- ե) Ձիթենյաց լեռ
- զ) Բեթղեհեմ
- է) Երուսաղեմ
- ը) Նազարեթ

1	
2	
3	
4	
5	
6	
7	

**№ 11**

**Ժամանակագրական հաջորդականության իմացություն պահանջող առաջադրանք**

**11. Եկեղեցական ժողովները դասավորել ըստ դրանց գումարման (1 միավոր)**

- ա) Դվինի երկրորդ եկեղեցական ժողով
- բ) Նիկիայի տիեզերական ժողով
- գ) Շիրակավանի եկեղեցական ժողով
- դ) Կոստանդնուպոլիսի տիեզերական ժողով
- ե) Աշտիշատի եկեղեցական ժողով
- զ) Եփեսոսի տիեզերական ժողով
- է) Նորավանքի եկեղեցական ժողով
- ը) Քաղկեդոնի ժողով
- թ) Շահապիվանի եկեղեցական ժողով

1	
2	
3	
4	
5	
6	
7	
8	
9	

**№ 12 - 13**

**Աշխատանք սկզբնաղբյուրով  
(1 x 4 = 4 միավոր)**

**12. Կարդալ մեջբերված հարվածը և պատասխանել հարցերին.**

**(2 միավոր)**

**«Մանավանդ ազգս Հայկազյան մեղքերի պատճառով անարժան դարձած և օտարացած մեղքերի հողմով փոշու պես ցանուցիր եղած երկրի երեսին՝ օտարասեռ ազգերի և ցեղերի մեջ: Հայցում ենք ամենախնամ և ամենագութ Արարչից, որպեսզի կտրվածը դարձյալ բժշկի և հոգու գրգանքով-իբրև թռչունը, որ ձագերին իր թևերի փակ է ժողովում - իր ամրածածուկ աջով վերստին հավաքելով հայերին նրանց վիճակված սեփական բնիկ և հայրենի երկրի ու գավառների մեջ, վերանորոգի այնպես, ինչպես ստեղծել էր ամենասկզբում՝ պանծալի փառքով և բարգավաճող արդյունքով: Ուժ փա, կազդուրի և հաստատարահիմն դարձնի թագավորական ու հոգևոր ինքնիշխանությամբ և ամեն փեսակ բարիքներով»:**

**1. Ո՞վ է մեջբերված աղոթքի հեղինակը:** (1 միավոր)

---

**2. Ի՞նչ պաշտոն է զբաղեցրել աղոթքի հեղինակը:** (1 միավոր)

---

**13. Կարդալ ստորև բերված տեքստը և պատասխանել հարցերին.** (2 միավոր)

**« ...արքայի սրից խաչ են պատրաստում, որի վրա գրում են. «Սպանման գործի արքայական այս զենքը Կյանքի Արքայի՝ Քրիստոսի խաչին նվիրյալ լինի, որով մեզ փրկեց հավիտենական մահից»»:**

**1. Ի՞նչ անվանում է ստացել այդ սուրը:** (1 միավոր)

---

**2. Ո՞վ է մեջբերված հատվածի հեղինակը:** (1 միավոր)

---

**№ 14-15**

**Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն և խմբավորում պահանջող առաջադրանքներ**

**14. Ի՞նչ սկզբունքով է կազմված շարքը: Տվյալ շարքում ո՞րը չի համապատասխանում շարքի կառուցման սկզբունքին:** (0,5 x 2 = 1 միավոր)

**14.1.** Գրիգոր Բ. Վկայասեր, Գրիգոր Զ. Ապիրատ, Ստեփանոս Դ. Հոռմկլայեցի,  
Կոստանդին Ա. Բարձրբերդցի, Գրիգոր Դ. Տղա, Ներսես Դ. Շնորհալի, Հովհաննես Զ. Սսեցի

---

---

14.2. Մետրոպ առք. Տեր-Մովսիսյան, Գարեգին եպս. Հովսեփյան, Զավեն եպս. Մահտեսի-Բաբայան, Բագրատ վարդապետ Թավաքալյան, Եզնիկ վարդապետ, Թադեոս վարդապետ, Հովհաննես վարդապետ, Տաճատ քահանա, Կոմիտաս քահանա Սարգսյան

---

---

**15.1. Գտնել ճիշտ շարքը: Ի՞նչ սկզբունքով է այն կազմված: (0,5 միավոր)**

- ա. խաչակնքում, մոմավառություն, տնօրինեք, ջրօրինեք
  - բ. մյուռնօրինեք, տնօրինեք, խաղողօրինեք, ուխտագնացություն
  - գ. խաղողօրինեք, աղօրինեք, մատաղ, Տյառնընդառաջի խարույկ
- 
- 


**15.2. Գտնել ճիշտ շարքը: Ի՞նչ սկզբունքով է այն կազմված: (0,5 միավոր)**

- ա. Ս. Գրիգոր Լուսավորիչ, Ս. Արիստակես Ա. Պարթև, Ս. Հովսեփ Ա. Հողոցմեցի, Փառեն Ա. Աշտիշատցի, Շահակ Ա. Մանազկերտցի,
  - բ. Ս. Վրթանես Ա. Պարթև, Ս. Սահակ Ա. Պարթև, Ս. Հուսիկ Ա. Պարթև, Ս. Հովհաննես Ա. Մանդակունի, Ս. Ներսես Ա. Պարթև
  - գ. Ս. Հուսիկ Ա. Պարթև, Ս. Արիստակես Ա. Պարթև, Փառեն Ա. Աշտիշատցի, Շահակ Ա. Մանազկերտցի
- 
- 


**15.3. Ի՞նչ սկզբունքով է կազմված հոգևոր թեմերի ճիշտ շարքը. ճիշտ շարքին ավելացնել առնվազն մեկ անվանում: (1 միավոր)**

- ա. Աստրախանի թեմ, Երևանի թեմ, Շիրվանի թեմ, Ղարաբաղի թեմ, Բեսարաբիայի-Նոր Նախիջևանի թեմ, ...
  - բ. Արարատյան թեմ, Ղարաբաղի թեմ, Ատրպատականի թեմ, Շիրվանի թեմ, Բեսարաբիայի-Նոր Նախիջևանի թեմ, ...
  - գ. Երևանի թեմ, Ղրիմի թեմ, Աստրախանի թեմ, Վրաստանի-Իմերեթիայի թեմ, Շիրակի թեմ, ...
- 
-

**16.1 (0,5 միավոր)**



**16.2 (0,5 միավոր)**



**16.1 Ո՛վ է պատկերված նկարում և ո՞ր դպրոցի ուսուցչապետն է եղել նա:**

---


**16.2 Ի՞նչ կառույց է պատկերված նկարում և ե՞րբ է այն կառուցվել:**

---

**17.1. (0,5 միավոր)**



**17.2. (0,5 միավոր)**



**17.1. Ո՞ր եկեղեցին է պատկերված նկարում և ո՞ւմ հանձնարարությամբ է այն կառուցվել:**

---

**17.2. Ո՞ր վանքն է պատկերված նկարում և ո՞վ է առաջին անգամ տեղեկություններ հաղորդել վանքի մասին:**

---

**18. Շարադրանք  
(2 միավոր)**

1. Ներկայացրեք «Որոմների առակը»: Ինչո՞ւ հողատերը թույլ չտվեց մաքրել որոմը:  
Ի՞նչ են խորհրդանշում ագարակը, ցորենը, որոմը: *(0,5 միավոր)*
  
2. Ի՞նչ է աղոթքը: Ո՞րն է ընդհանրական և առանձնական աղոթքների տարբերությունը: Ներկայացրեք Հայոց եկեղեցու ժամերգությունը: Ժամերգության ի՞նչ տեսակներ գիտեք: *(0,5 միավոր)*
  
3. Ներկայացրեք խաչքարերի խորհրդաբանությունը: *(0,5 միավոր)*
4. Քրիստոնեական-ազգային արժեքների պահպանումն ընտանիքում ինչպե՞ս կարող է նպաստել «հայ» տեսակի շարունակականությանն ու հարատևմանը: *(0,5 միավոր)*